ԱՄՈՒՍՆՈՅ ԻՒՐՈ ԳՈՆՑԱՅԻՆ ԵՒ ԳԵՂԵՑԿԱՊՏՈՒՂ ՇԱՌԱՒԵՂԱՑՆ ԱՒՔԱՆԱ
ԵՒ ՀԱՍԱՆԱ: ԱՐԴ ԱՂԱՉԵՄ ԶՁԵԶ ՍՐԲԱՆ, ՔԻ ՅԻՇԵՑԷՔ ԶՃԱՇ ՄԻԱԲԵՑԱ
ԵՒ ԶԾՆՈՂԱՆ ԻՄ Ի ՄԱՔՐԱՓԱՅԼ ՅԱՂԱԻԹՍ ՁԵՐ. ԵՒ ՈՐ ՍՊԱՍԱՒՈՐ ԼԻՆԻՔ
ՓԱՌԱՉԱՐԴ ԽՈՐԱՆԻՍ ՊԱՐՏԻՔ ԻՆՁ :Գ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ, ԱՄԵՆ ՉԱԻՐ
ԳՐԻԳՈՐԻՆ ԶԾԱՌԱՅԱՐԴԱՐԻՆ ԵՒ ԶԱԽԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ ԻՆՁ ՄԱՏՈՒՑԱՆԷՔ
ՇԱՇԻՍ, ՎԱՍՆ ՍԻՐՈՅՆ ՔԻ ԱՆԽԱՓԱՆ. ԵՒ ՈՐ ԱՆՓՈՅԹ ԱՌՆԷ, ԳԱՏԻ
ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԵՐԱՆԷՆ ԱՅ.

Ծանոթ. *Այս մատուռը գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ, գետակի ձախ ափին, բարձր և ուղղահայաց բլրի գագաթին:*

*Հրատ. Ջալալեանց, Բ, 143—144։ Քաջբերունի, Արարատ, 1889, Զ, 331—332։ Ալիշան, 112—113։*

**191. *Ս. ԳՐԻԳՈՐ եկեղեցու ճակատաքարին. եկեղեցին գտնվում է գյուղի հարավային եզրին, այգիների մեջ. 6 տող.***

ԿԱԱՒՆԱՅԵՄՐ ՍՄԵՓԱՆՈՍ ·ԳԲ
ՄՎԻՎԴՄԿԵ ՂԻՍԳՐԳՈՐ Ր
ԻՆՋԻՆՉ Ո~ ՄՏՌԵԼՄԻ
ԱԿԵ Յ Ի՛ՆԵԼ ԱՆԻՈ Ղ ՈՒՍ
ՅԱՂ ՂԵԼԻՈՎ ԽԱՏԱ·Է
ԴԱՄ··ԱՅ :Չ:Խ:Ե

ԿԱՄԱՒՆ ԱՅ· ԵՍ ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍ
ԳԻՐ ՏԿԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,...ԿԵՂԻՍ
ԳՐԳՈՐԻՆ ԶԻՆՁ [Մ]ՂՈՒՏՔ ՈՐ ԵՒ
ՄԻԱԿԵՑԻՆ · · · | ՈՎ ԽԱՓԱՆԷ
ԴԱՏԻ ԱՅ ԹՎ. :ՉԽԵ: (1296):

Ծանոթ. *Գրված է խաչերի արանքում. խիստ եղծված է. դժբախտաբար լուսանկարը չի ստացվել:*

*Հավանաբար կապ ունի № 145 արձանագրության հետ, ուր հիշատակված է ՍԲ. ԳԵՐԳԻ (Գևորգի) եկամուտները Սիոնի վանքին հատկացվելու մասին:*

**192. *ԽԱՉՔԱՐԻ բեկոր (միջին մաս), ընկած է ս. Գևորգ մատուռի արևմըտյան փոքրիկ բակում. Թևերի տակ.***

ԹՎ:Գ: :ԼԷԲ·ԿՆ ԹՎ. :ՊԼԲ: (1383) ԿԱՆԿՆԵՑԱՒ.

*ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱՏԵՂ*

**193. *ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատուհանի քարի վրա եղել է.***

Աստուած ողորմեա Եղիսաբէթին.

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Զ, 332։ Ալիշան, 118։*

## 15. ԱՐԿԱԶ ԵՎ ԱՐԿԱԶԻ ս. ԽԱՉ ՎԱՆՔ

*Այս գյուղի և վանքի մասին ավանդությունները ու պատմական տեղեկությունները հասնում են մինչև XII—XIII դարերը: Այժմ գյուղը անմարդաբնակ է, իսկ վանքը հիմնովին վերակառուցվել է XIX դարում: Ներկայումս արձանագրություններ ունեցող մանր հուշարձանները ցրված են վանքի շուրջը, գյուղատեղի ավերակների մեջ և գերեզմանատանը:*

**194. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և պարզ, ընկած է վանքից ներքև, դեպի Մալիշկա տանող ճանապարհի եզրին.*



ԵՍ ՄԱՆՈՒԷԼ ՔԱՀԱՆԱ| ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ
ԲԱՐ|ԽԱԻՍ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲ|ԱՒՐ ԻՄՈ ԽԱՉԱՏՐՈ.
ՅԱՂ|ԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ, ԹՎ. :ՉԻԶ: (1277):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, 107։ Ալիշան, 124։*
*Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 84։*

**195. ԽԱՉՔԱՐ**, *օգտագործված է որպես տապանաքար, վանքից հյուսիս արևելք՝ փոքր գերեզմանատան մեջ. 6 տող.*



ԵՍ [Խ]ՈՍՏՐՈՎ, ՍՄԱ ԱՒ Ժ|ԱՄԱՆԱԿԱՒ
ԹՒԻՒ :ՉԻ|Դ: (1275):

Ծանոթ. *Մնացած մասերից կարելի է հասկանալ, որ երիտասարդ մարդու համար է կանգնեցված։*

**196. ԽԱՉՔԱՐ**, *կանգնած է վանքի պարսպի հարավային պատի տակ, արտաքուստ. ճակատին և շրջանակներին.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԱՍԼԱՆ ԲԷԿԻՆ, ՈՒԱՍԼԱ
ԽԱԹՈՒՆԻՆ ԱՄԷՆ|. :ՉԾԳ: (1304):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, 168։ Ալիշան, 118։*
*Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 42։*

**197. ԽԱՉՔԱՐ**, *կանգնած է պատվանդանի վրա, դեպի Թանաատ վանք տանող ճանապարհի եզրին, ավելի մոտ վերջինիս.*



ԹՎ. :ՉԽԵ: (1296). ՈՐՔ ԱՆՑԱՆԷՔ . . . .
ՀԱՐԱԶԱՏ . . ՀԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.
ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻ.
ԶԱԼԷԽԻՆ ԵՒ ԵՂԲԱՐԱՑ ԻՒՐՈՑ:

Ծանոթ, *Թվականը և մանրատառով շարված մասն այժմ բոլորովին եղծվել է. առնում ենք հին հրատարակիչներից. անդամ մնացածը խաչքարի ստորին մասում պահպանված երեք լրիվ տողն է միայն։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, 108։ Ալիշան, 124։*
*Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 84։*

***198. ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** արևմտյան մուտքի կամարակալ քարի վրա.*

Վարհամ Խաթուն յաղաւթս յիշեցէք.

*Հրատ. Ջալալեանց, 134։ Ալիշան, 118։*

***199. ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** ներսում. մի խաչքարի պատվանդանի վրա.*

Ի թվին մերոյ ։ՉԿԹ։ (=1320) Յակոբ Էրէց կանգնեցի զխաչս իւն և ամուսնոյն իմոյ, որք կարդայք յաղաւթս յիշեցէք։

*Հրատ. Ջալալեանց, 134։ Ալիշան, 118։*

***200. ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** մուտքի հյուսիսում.*

. . . Ու ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս և մանկան Էաչոյ և մեծահաւատ տիկնոջ խոսանայ, յորժամ տէր էր տեղւոյս։

Ծանոթ. *Առաջան անունը սխալ է վերծանված. Պռոշի կնոջ անունը* Խութլու խաթուն *էր։*

*Հրատ. Ջալալեանց, 134։ Ալիշան, 119։ Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 43։*

***201. ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** մուտքի վրա, նախորդից ներքև.*

Կանգնեցաւ խաչս ի փրկութիւն Զնաքուղայ աղին. թվին ։ՉԽԶ։ (1297)։

*Հրատ. Ջալալեանց, 134։ Ալիշան, Սիսական, 119։*

***202. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,** որը գտնվելիս է եղել եկեղեցու արևմտյան մուտքի առաջ, որոշ է միայն թվականը՝*

։ՉԾԳ։ (1304)։

*Հրատ. Եղիազարյան, 40։*

## 16. ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ

*Այս վանքը գտնվում է Վերնաշեն գյուղից դեպի հարավ-արևելք, 6—7 կիլոմետր հեռու՝ Մալիշկա տանող ճանապարհի վրա։ Տեղացիները սովորաբար Ղարավանք են անվանում թե՛ վանքը և թե՛ գյուղատեղը։*

*Վանքի Թանահատ կամ Թանատ անունը, ինչպես և գլխավոր եկեղեցին ս. Ստեփանոսի անվամբ կոչելը՝ շփոթ են առաջացրել մասնագիտական գրականության մեջ։ Խնդիրն այն է, որ գոյություն են ունեցել երկու Թանահատի վանքեր և երկուսի էլ եկեղեցիները կոչվել են ս. Ստեփանոս։ Այս տեղեկությունների հիմնական աղբյուրը Ստ. Օրբելյանի պատմությունն է, ուր հնագույնը տեղադրված է բուն Սյունիքում, Ծղուկ գավառում և «400 ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան զհայ թուականն»*[1]*, իսկ մյուսը՝ Վայոց ձոր գավառում՝ կապված* VIII *դարի նշանավոր մտավորական Ստեփանոս եպիսկոպոսի սպանության և այստեղ թաղվելու դեպքերի հետ*[2]*։ Քանի որ մինչև վերջին տասնամյակները Թանահատի այդ երկու վանքերից միայն մեկի՝ Վայոց ձորում գտնվածի տեղն էր ստույգ հայտնի, այդ պատճառով էլ պատմագրի՝ երկու տարբեր հուշարձանների մասին հաղորդածները միացվում էր բանասերների կողմից և վերագրվում Վայոց ձորի Թանահատին*[3]*։*

---

[1] Ստ. Օրբելեան, *Պատմութիւն, էջ 160,*

[2] *Անդ, էջ 143։*

[3] Ջալալեան, *Բ, 206,* Բաջբերունի, *Արարատ, 1889, Բ, 100։* Ալիշան, *Սիսական, 110։*